ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1895. ԹԻՒ 13 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 100

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York N. Y. Vol. V, 1895.

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աղերսագիր առ Թագուհին Անգլիոյ.— Պատկեր Անգլիոյ Վեհ. Թագուհւոյն.— Բարկացած Հայոց մռնչիւնն.— Թրքահայոց մօտալուտ ճգնաժամն.— Ներկայ Ստիպողական Պարտքն. Զ. Եզրակացութիւն.— Ի՞նչ ասենք,—Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ Քալիֆորնիայէ— Մատենախօսական. Նոր Բառարան Անգլիերէնէ Հայերէն.— Այլևայլք։

ԱՂԵՐՍԱԳԻՐ
ԱՌ ԹԱԳՈՒՀԻՆ ԱՆԳԼԻՈՅ
ՑԱՆՈՒՆ 2,500,000 ՀՈԳԻՈՑ

Ամերիկայի մեծագոյն երիտասարդական ընկերակցութիւնն որ կը կոչուի Ենկ Փիփլ'ս Սոսայիթի աւ Քրիսչեն Էնտէվէր, և համառօտ յորջորջմամբ «ENDEAVORERS», այսինքն ՆԿՐՏԱԿԱՆՔ, իւր տարեկան ժողովոյն փակման նստին մէջ, Յուլիս 15, հետևեալ քուէարկութիւնն կատարած է—

«Մեք, Հոգաբարձութիւնս Երիտասարդաց Ընկերակցութեան վասն քրիստոնէական նկրտման, ներկայացուցիչ լինելով 2,500,000 անդամոց, եկեալ ի Պոսթոն ի մեր ԺԴ տարեկան միջազգային համաժողովն, թուով 50,000, ամենախորին յարգանօք կ'աղերսեմք զՆորին Վեհափառութիւն զԹագուհին Անգլիոյ, խնդրելով իւր ուշ և ուրոյշ ի կացութիւնն քրիստոնեայ հպատակաց Թուրքիոյ, և կաղաչեմք զՆայանուն հասարակաց հաւատոց և բռնաբարեալ խղճմտանաց գործածել զիւր մեծ ազդեցութիւն և իշխանութիւն օգնելու անոնց որք ի կոռնչել են, և տալու այդ երկրին ապահով և արդար վարչութիւն մի։ Սոյն աղերսագիր մատուցուի նաև առ Նախագահն Միացեալ Նահանգաց։»

Այս որոշումն մեծ ծափիւք և յոտնկայս ընդունուեցաւ։

Արդէն ծանօթ է «Հայքի» ընթերցողաց այն մխիթարական իրողութիւնն թէ Վիկթորիա Թագուհին գործօն համակրանք ցոյց տուած է Հայոց Խնդրոյն համար։ Զայս նորէն յիշել կ'արժէ այժմ երբ Պահպանողական կուսակցութիւնն իշխանութեան անցած է, կուսակցութիւն մի որ թրքասէր քաղաքականութեան հետևելու տխուր համբաւն կը վայելէ։ Թագուհին գեր ի վեր կը կենայ քան բոլոր կուսակցութիւններն, և Նորա գթասիրտ և արդարահատող տրամադրութիւնն նկատմամբ Հայաստանի՝ չի կրնար առանց ազդեցութեան մնալ Սալզպէրիի դահլիճին վերայ։

Ու պէտք է հաւատալ թէ Պահպանողականք Սասնոյ կատորածէն ի վեր շատ եղանակաւորած են իրենց թրքասիրութիւն։ Նոյն իսկ Թայմզի ուղղեալ հեռագիր մի Կ. Պոլսէն՝ կ'ասէ թէ Թուրքք շատ կը սըխալին կարծելով թէ Պահպանողականք նախկին թրքասիրութիւնն կը պահպանեն դեռ։

ԲԱՐԵԿԱՄ ՀԱՅՈՑ

ՎԻԿՏՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ

H. R. M., QUEEN VICTORIA

ԲԱՐԿԱՑԱԾ ՀԱՅՈՑ ՄՈՆՉԻԻՆՆ

Եւրոպա՛, բաժակ յուսահատութեան դու կ՚առաջարկես վիրաւոր Հայուն որ ի ծունր իջած կը հայցէ քո գութ։ Դու նմա կ՚ընձեռես բաժակ դառնագին քան զդուժ Թրքին։ Վա՜յ քեզ, անգո՛ւթ Եւրոպա։

Վեհա՛նձն Ֆռանսա որ դաղափարի համար դու միայն կը մխիս ի մարտ, և այր քաջ զինուորք ասնձակոծ արին հեղ մ՚ի Սիւրիա կատղած Միւսիւլմանն, այժմ վասն է՞ր այդքան տափակ դիրք ունիս հանդէպ դաղանին։ Անցեալդ կ՚ուրանա՞ս, զառամեալ Ֆռանսա՛։

Հզո՛ր դրացի, հսկայ Ռուսիա՛, ի քո՞ւն ես արդեօք։ Հայն ո՞րքան անգամ պարտանձին վարկաւ մեռնիլ ի սէր քո։ Դու որ արդէն ուժով գրկած ունիս զկէս մեր ազգին, ի՞նչպէս կը ժուժես որ դուժ միւսիւլման յօշոտէ միւս կէսն։ Այդքան պզտիկցար, ո՛ մեծ Ռուսիա...։

Տե՛ս, Անգլիա՛, տե՛ս, զքո դաշնագիր յանմեզ արիւն թաթաղած՝ Թուրքն երեսիդ կը զարնէ զայն լրբաբար. իսկ դու նստեր անուշիւք դեռ ի զգօնութիւն զժանան ածել կ՚աշխատիս։ Ո՞ւր են մարտանաւք, ո՞ւր են թնդանօթք։ Ամո՛թ, Անգլիա՛, ամո՛թ...։

Իսկ քեզ, Թուրքիա՛, մեք քեզ ոչ աղերս ունիմք ո՛չ բողոք. անէ՛ծք անիծելոյդ։ Դու ոմբակոծ արիր խաղաղ մեր չէներ, խոշխոշեցիր մայր ու մանուկ, ներկուեցար արեամբ կուսից։ Ձեռքդ շորթ՞ան, կռնծի՞ս։ Անգո՛ւթ զինուոր, ջերդ ջախի՞ն, տուն չհասնի՞ս։ Եւ դու որ «զարկէ՛ք» հրամանն ոռնացիր, արի՞ւն փսխես ցայդ և ցերեկ, յիշե՞ս գարիւն անմեղաց։

Ո՛չ, ո՛չ, անէ՛ծք բաւ կարդացին մեր նախնիք. արդ պատանիք, երիտասարդք, նոյն իսկ մեր քորք և ալեւորք, ամենքս գիտեմք որպէս պարտ է վարուիլ Քեզ հետ ա՛ Հրէշ.— եղունգ, ժանիք, բռնցի ունիմք և աքացի կազմ պատրաստ. ձորերու խիճ, սարերու քար, խոփ և հօտաց, կացին, տապար, ոուր երկայրի, նոր հրացան, թերեւս նաև թնդանօթ...։

Դողա՛, Սուլթա՛ն, դողացէ՛ք, շարա՛ր. երկնաչունչ գայրոյթ զինած է զՀայս։ Թէև լռեն դիւանագէտք, թէպէտ մռէ Եւրոպա, մեք չարունակ պիտի գոռամք ԱԶԱՏՈՒԹԻ՛ՒՆ, ՀԱՅԱՍՏԱ՛Ն։

ԹՐՅԱՀԱՅՈՑ ՄՕՏԱԼՈՒՏ ՃԳՆԱԺԱՄՆ

Երկիւղ և զայրոյթ կը տիրեն Թրքահայոց մէջ։ Զայրոյթ արդար և երկկուղ ի մասուն։ Փորձն ցոյց տուած է թէ ամեն եւրոպեան միջամտութիւն որ լոկ խօսքով կը լինի Դրան քրիստոնեայ հպատակաց համար, յոռեգոյն է քան անօգուտ։ Թուրքն ամեն անգամ նորոգեալ վայրագութեամբ կը վերսկսի պատառել իւր որսն զոր անպաշտպան կը համարի։ Եթէ ներկայ փորձն զոր դարձեալ խօսքով կ՚անեն Արեքն ի տէրութեանց, զինու զօրութենէ զրկուած մնայ, պիտի վիժի և Հայոց կացութիւնն այն ատեն պիտի լինի բազմապատիկ յոռեգոյն։ Պարզապէս Հայք պիտի ջարդուին, ա՛յնքան զսպեալ կատաղութիւն համբարուած է ի սիրտ Համոյի և իւր թուրք խաժամուժին։

Հայոց երկիւղն հիմնաւոր է, և զայրոյթն ոչ նուազ արդար։ Արդէն Սանոյ ջարդին վերայ բովանդակ Հայութիւնն խորապէս սրամտած է, բայց եւրոպական ազդու միջամտութեան մի յուսո
 մուռ կ՚անէր։ Այժմ որ այդ կափարիչ յոյս բարձուելու վերայ է, բնականօրէն հուրն դուրս պիտի արձակի։

Սանոյ ջարդն թուրք կառավարութեան հայատեաց քաղաքականութեան համաձայն, և պաշտօնական ծրագրի համեմատ նախամտածուած էր, և ի գործ դրուեցաւ այնպիսի բարբարիկ անգթութեամբ, այնպիսի զարհուրելի գազանութեամբ դէպ յանձնատուր այր մարդիկ, դէպ անմեղ ոնկատին և անպաշտպան կանանին, որ Սասունցւոց մէջ երեւցած սեէ յեղափոխականի ներկայութիւն, սեէ ապստամբական դիտման կասկած, սեէ գործնական դիմադրութիւն չի կրնար ամենափոքր չքմեղանք կամ թեթեւութիւն ընծայել Թրքի խժդժական զազրագործութեանց։

Ուրեմն Թրքահայք մեծագոյն ճգնաժամու մի կը մօտենան՝ մղեալ իրաց բրնական բերումէն։ Նոքա չեն կրնար թողուլ որ այս անգամ ալ Եւրոպա պատրէ զիրենք և քնացունէ խնդիրն։ Նոքա չեն

կրնար ընդունիլ որ իրենց ուղղակի տիրէ դեռ այն կառավարութիւնն որ բանակաւ և թնդանօթով եկաւ իրենց խաղաղ գիւղերու վերայ իբրեւ օտար թշնամեաց։ Միայն խորհուրդ կուտամք որ զգուշանան իրենք զիրենք այսինչեան կամ այնինչեան կոչելով՝ իրենց առաջնորդ, կուսակցապետ կամ ղեկավար նկատելէ այնպիսիներ որք հեռուէն, իրենց եւրոպական կայաններէն ձայն և հրահանգ արձակել կը սիրեն, հրահանգ որ յաճախ անյարմար է Թուրքիոյ մէջ գործողներուն և չփոթութեան, երկպառակութեան և մինչև իսկ վիժման պատճառ կը լինի։

Միթէ բուն Թուրքիոյ մէջ բաւական զգօն, անկեղծ և բանիբուն առաջնորդներ չկա՞ն։

ՆԵՐԿԱՅ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՊԱՐՏՔՆ

Զ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Պատշաճ կը դատեմք ամփոփել իմաստն այս յօդուածոց որ արդէն երկարեցան և յանգել մի եզրակացութեան։ Ընթերցողք դիտեցին թէ մեք կը ջատագովեմք հաստատումն յեւրոպա մի կեդրոնական վարչութեան որ գործէ բովանդակ զօրութեամբ և հեղինակութեամբ հայ հայրենասիրաց։ Մեք բացատրած եմք այն նկատումներ որք ըստ մեզ կ'արդարացուցանեն մի յուզումն ի նպաստ այս ձեռնարկի։ Ոչ ոք կրնայ ուրանալ թէ մի կազմակերպեալ գործունէութիւն կարող է տանապատիկ աւելի արդիւնաւոր լինիլ։ Սակայն այս համեմատական առաւելութիւնք չեն որ զմեզ կը հրապուրեն փաստաբանել մեր բոլոր ուժով զայս առաջարկ։ Ինչպէս նախապէս ցուցած եմք մեր գործունէութիւն ունի մի արմատական և հիմնական թերութիւն։ Այն հաստատուած է այս տեսութեան վերայ թէ հայ ժողովուրդն կրնայ ապահովել զիւր ապագայն ապաստանելով այնպիսի արտաքին զօրութեանց որոց նպաստաւոր ուղղութեան վրայ այն չունի բնաւ շարժիչ ազդեցութիւն։ Ինչ գործնական թերութիւնք որ կան տրամաբանական հետևանքն են այս սկզբնական սխալին։ Ասա մի ժողովրդեան և զայն համոզէ թէ մի կանխորոշ ճակատագիր կը կառավարէ զիւր վախճան, յայնժամ այդ ժողովուրդ կը կորուսանէ զիւր գործօն, ձեռնարկու և վեհ ոգի և կը միտի հեզութեամբ հպատակիլ վայրենի զօրութեանց որք վերջապէս կը փճացնեն զիւր գոյութիւն։ Համոզէ զայն թէ օտար տէրութիւնք հոգ պիտի տանին իրեն և բարւոքեն զիւր վիճակ, այդ ժողովուրդ, փսխանակ ինքն իրեն հոգալու, կը սպասէ մինչև որ իւր պաշտպանք հասնին օգնութեան։ Ցորժամ մեր ազգ տոգորուած լինի այս ազանդիւ, բնականաբար չի գգար զհարկ կիրառելոյ զիւր բոլոր հիգ և ջանք, թող զհարկ կազմակերպման այս ջանից։

Առաջուստ մեք յայտարարեցինք թէ պատասխանատուութիւնն կը ծանրանայ մեր ժողովրդեան վրայ և թէ մեր ժողովուրդ ինքն պարտի լինիլ մի տիրական գործիչ յորոշման իւր ապագայի։ Երբ զայս քաջ ըմբռնեմք յայնժամ ըստ կարի կ'աշխատիմք գմեր բաժին կատարելու։ Այս գիտակցութիւն զմեզ պիտի առաջնորդէ քաջ հմտանալ մեր գործոյն,— թէ ինչ են չափ և հանգամանք զանազան զօրութեանց որք կը գործեն մեր հայրենիքում, և հմտանալ մեր գործունէութեան —թէ ինչ եղանակօք հնար է ուղղել զայնս ի նպաստ մեր փաստին։

Ցընթացս այս գրուածոյ մեք յատնած եմք մեր գաղափարն նկատմամբ այս խնդրոց։ Պարտ է մեզ ունենալ մի հայրենիք— եթէ ոչ Հայաստան, Կիլիկիա կամ Փոքր Ասիա— ուր հարկ է կեդրոնացնել զմեր բնակութիւն և դանազան ուժեր։ Տեղի կայ տնտեսական, կրթական, յեղափոխական և դիւանագիտական գործունէութեանց և սոքա պարտին, որպէս զի ազդեցիկ լինին, մանել կազմակերպ վիճակի։ Դիտնալով թէ մեր ազգի բովանդակ այժն յոյժ չափաւոր է և թէ մեզ չի վճարեր վատնել ոևէ զօրութիւն ի զուր, մեք առաջարկած եմք որ յեւրոպա հայտատուի մի կեդրոն որ ստանձնէ վերին տեսչութիւն մեր գործոց այն արձակու-

թեամբ կոր ազատ Եւրոպա կը թոյլատրէ։ Մեր եղբարք այլուր թող օգտին իւրեանց տիրող պարագայիւք և գործեն այդպէս։ Գործադրութիւն մեր առաջարկի մեք նը-կատած եմք ներկայ ստիպողական պարտքն, մանաւանդ ի տես ձախող ելից ներ-կայ տագնապին։

Տէրութիւնք, մանաւանդ Մեծն Բրի-տանիա, բաւական յառաջացած են ի նը-պաստ մեզ և յանգած են ի խաչային կե-տն որ է այս թէ Եւրոպա պիտի գործա-ծէ՞ բուռն զօրութիւն կիրառել մի ծրա-գիր չափաւոր բարւոքմանց զոր Դուռն կուրաբար մերժած է։ Թերեւս տէրու-թեանց այս ընթացք ցայս կետ չափազանց յուսադրած է զմեզ, կամ գոնէ կոմանս, այնպէս որ չտեսնուիր այլ ևս հարկ ո և է յուզման ի նպաստ մեր առաջարկի,— իբր թէ բարւոքեալ Հայաստան արդէն կա-տարուած իր մի լինէր։ Նաև մեք վստահ տեղեկութիւն ունիմք թէ բաղխումն անձ-նական վատոգի նախանձուն ոմանց մեր առաջնորդող Հայոց առ այժմ անհաւա-նական կ'անէ արագ իրացումն մի կազմա-կերպութեան, քանզի կ'արգելու դոցա գործակցութիւնն։

Վերապահելով հանդերձ մեր իրաւ-ունքն բողոքելոյ իրաց այս ցաւալի միտ-ման դէմ, մեք կ'ուզեմք յայտնել մեր համոզում թէ մինչ իսկ եթէ այս մասնա-ւոր առաջարկ յետաձգուի, այս յուզումն յոր մեք մասնակցած եմք չեղած է բնաւ ի զուր։ Մինչ իսկ եթէ Հայաստան բարե-կարգուի չնորհիւ Եւրոպիոյ, մեք դեռ պիտի չփոխեմք զմեր լեզու։ Մեք պի-տի շարունակեմք յեղյեղել այն ըսկզ-բունքներն զորս յիշած եմք այս գըր-ուածում,— թէ հայ ժողովուրդն պարտի լինիլ մի տիրական գործիչ ի մէջ զօրու-թեանց որք կ'ազդեն իւր կացութեան, թէ մեր ազգ պարտի ինքն ըստ կարի գուն գործել որպէս զի կատարէ զիւր սրբա-զան առաքելութիւն յԱրեւելս, փոխանակ կախում ունենալոյ զայլոց քմահաճոյից, և թէ զայս գործ յաջողցնելոյ անհրաժեշտ պայման է ներքին գործակցութիւն և կազմակերպութիւն։

ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

Ի՞ՆՉ ԱՍԵՆՔ

ՀԱՅՔԻ 98 թուոյն «Հնչակ և Սասունցիք» վերնագրով հատուածն առիթ տուած է «Հնչակի» ցասմնալիր մի յարձակում գործել «Հայքի» և սորա այն տեղեկու-թեան աղբիւրն եղող անձնաւորութեան դէմ։ Մեզ ուղղուած և «Հնչակի» մէջ արդէն հրատարակուած դիմախօսութիւնն կը կրէ թէև հրահանգեալ ստորագրու-թիւններն մեր Սասունցի երեք ազգայնոց որք ի Լոնտոն, սակայն դժուար չէ տես-նել անդ Հնչակի ներշնչումն։

Մեք կը յուսայինք թէ Հնչակ, անդ-րադառնալով այդ գրութեան անպատե-հութեանց վերայ, պիտի հրաժարէր հրա-տարակելէ, սակայն մեր յոյս ի դերև ե-լաւ։

Խիստ տգեղ բան է վէճ մի սկսիլ ուր մտնեն նուիրական անուններն մեր Սա-սունցի եղբարց և ոչ նուազ նուիրական անունն այն օտարականին, (մեր տեղեկու-թեան աղբիւրն եղող Ամերիկացւոյն), որ իւր հայասիրութեամբ և գործերովն, իւր յօդուածներովն և յատուկ գրքովն, վեր-ջապէս իւր յատուկ առաքելութեամբն ի Լոնտոն յօգուտ Հայ դատին գործելու, արդէն ազգային երախտագիտութեան ար-ժանի ճանչցուած է։

Երբ ստացանք դիմախօս գիրն, իսկոյն նամակաւ դիմեցինք մեր Ամերիկացի տե-ղեկատուին հարցնելու թէ արդեօք «Հայ-քի» մէջ յիշուածն սխալմունք կը պարու-նակէ՞ր։ Պատասխանեց մեզ թէ «Պետրո-սի զգացումն դէպ ի Մուրատ թշնամա-կան չէր, այլ պարզապէս այն թէ Սասու-ն արթնցնելու համար նորա ջանքերն անհրաժեշտ չէին, հետևապէս կրնային ա-ելի օգտակար լինիլ ուրիշ տեղ։ Նա չմեղադրեց զՄուրատ։»

Կը խոստովանիմք թէ ՀԱՅՔԻ մէջ պատմուածն կարելի է այնպէս չարաչար մեկնաբանել Սասունցւոց, որ շատ ցաւին։ Սակայն կը վայելէ՞ միթէ այնպէս կլնե-ցունել մեր պարզ եղբայրներուն իբր թէ «Հայքի» տեղեկատուն ասած է և «Հայք» ալ կրկնած է «ինչ որ արիւնխում գազան Թուրք կառավարութիւնը։»

Այդ ատիճան անազնիւ կրքոտու-թիւն չէինք սպասէր Հնչակէն։

Բարկանայք և մի՛ մեղանչէք։

Ինչ՞ ասեմք «Հնչակի» բարկութիւնն իջեցուցնելու համար. ասե՞նք թէ Սասունցիք Հնչակէն սովրեցան Սասունցի լինիլ, քաջագործել, դիւցազնանալ։

Ասե՞նք թէ յեղափոխական գործիչներու ներկայութիւնն ի Սասուն «պատճառանք» (պատճառանք կը նշանակէ pretexte, ոչ թէ raison) չընծայեց Թուրք կառավարութեան եղեռնական չհատակութեանց։

Ասե՞նք թէ Սասնոյ յեղափոխական գործիչներն բնաւ սխալ հաշիւ չունեցան և երբէք սխալ քայլ շառին չնորհիւ Հընչակի ամենիմաց հրահանգաց և ամենալուրջ առաջնորդութե՛ան։

Թող Հնչակ շատ չբարկանայ, կ'ուզեմք մի կարծիք յայտնել։ և այս է մեր կարծիքն թէ Սասնոյ մէջ աշխատող զգօնամիտն Մուրատ անձնուիրաբար հաղորդ լինելով Սասունցւոց նեղութիւններուն, չգործեց այնպիսի սխալներ որք փառասիրութենէ կամ պարծենալու փցուն տենչանքէն կը ծագին։ Բայց հեռուէն, իր Աթենական կամ Լոնտոնեան ապահով կայաններէն խօսող Հնչակի մասին միևնոյն կարծիքն չունիմք։

Եւ մեզ համակարծիք եղողներն տակաւ կը շատնան։ Ի դէպ չեմք համարիր մեր աննպաստ կարծեաց հիմունքն ցուցնել։ Աւելի լաւ է որ հետաքրքիր եղողներն անգամ մի կարդան այն նամակն զոր Մուրատի ընկեր «Դժոխք» հրատարակեց Դրօշակի մէջ, կոտորածէն յետոյ, և որոյ մէկ մասն արտատպուած է «Հայքի» 96դ թուով։ Հոն պիտի գտնեն ընթերցողք վչտահար գործչին արտասուալի բողոքն այն յեղափոխական դեկավարներու դէմ որոց կուսակցական մոլեռանդութիւնն և բաժան գործելու յամառումն պատճառ եղած է Սասնոյ այնքան շուտ և բոլորովին քանդուելուն։ «Այդ կուսակցութիւնները» կ'ասէ «այնպիսի մի վէրք բացած են մեր սրտին՝ որ ցմահ անմոռանալի է մեզ։» «Մեր անմոռանալի ընկերը, Մուրատը, գլուխ տրաքեցնելու չափ կը ցանկար նպաստել միացման գործին։» Սակայն չկրցաւ յաղթել Հնչակի յամառութեան։ «Այդ ընթացքը անշուշտ մեզ դիտել կուտայ,» կը շարունակէ մեղադրել «Դժոխք» «որ եսական փառքի յետեւից ընկած, անձնական կրքերից կուրացած ջլատում են ոյժերը, քան զօրացնում. մոռացած են ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանութեան համար են ծառայեցնում գործը։»

Կը ցաւիմք որ Հնչակի մեզ դէմ այս անգամու յարձակումը աւելի հաստատութիւն կուտայ մեր աննպաստ կարծեաց։ Կ'ուզէ ինքզինք քան «զՀայք» ու քան «զԴրօշակ»աւելի սիրալիր բարեկամ և վչտակից ներկայացուցնել Սասնոյ։ Կուսակցական կրքոտ մրցման շարունակութիւնն է այդ։ «Հայքի» դէմ ասուածներուն ներենք, բայց ինչ՞ ասենք երբ Հնչակ «խաբեբայ,» «ագգաՁնաս և միևնոյն ժամանակը զրպարտիչ ստայօդութիւններ» կարկատող կը ներկայացուցնէ այնպիսի ազնիւ օտարական մի որ դատաւորին առջեւ երդուելով թարգմանեց Պետրոսի և ընկերացն վկայութիւններն Սասնոյ արկածներուն նկատմամբ, և թարգմանութիւնն յղուեցաւ անգլիական կառավարութեան և Լրագրաց։

Ի՞նչ ասենք Հնչակին որ խորապէս վիրաւորել կ'ելնէ այնպիսի օտարազգի մի որ ինքզինք նուիրած է մեր Սուրբ Դատին, և կ'անէ վիրաւորանքն Տիար Պետրոսի անունովն, ա՛յն Պետրոսի որու մասին խորին սքանչանօք խօսեցաւ օտարականն և մինչև անգամ բաղդատեց զնա Անգլիոյ մեծ Ծերունւոյն, Կլատսթոնի հետ։ Այս հիացման տուրքն տրուած է Տ. Պետրոսի «Հայքի» միջոցաւ և այն նոյն թուով յոյսում կար Հնչակի անհաճոյ հատուածիկն։

Ինչ՞ ասենք, կրկնե՞նք Դժոխքի խօսքերն «մոռացած են ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանութեան համար են ծառայեցնում գործը։»

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼԻՍ

(Մեր ուղեւոր թղթակցէն)

Կ. Պոլիս Յուլիս 4, 1895

Այս նամակս ահա Կ. Պոլսէն կը գրեմ։ Պոլիսը երկունքի մէջ է։ Նոր եպարքոսն վեց ամիս կ'ուզէ խնդրոյն վերայ տեղեկութիւն քաղելու... Թիւթիւնճիէֆ զարնուած է, գուցէ այսօր վաղը չար հոգին փչէ։ Սօֆթաներու ձեռքով մզկիթներուն մէջ մթերուած հազարաւոր զէնքեր և հրանիւթ գտնուեցան։ Պատրիարքը աննկուն կ'աշխատի։ Հայեր շատ ե-

ռանդուն են։ Բանտարկութիւն և այլն զի-
րենք չի վախցներ։ Հոս Դրօշակեանք աւե-
լի զօրաւոր են քան Հնչակեաններ։, բայց
բոլորն ալ հայրենասէր են, և չեն Ամերի-
կայի հայ երիտասարդաց նման եղբայրա-
տեաց հակառակորդ իրարու։

Մի դէպք պատահեցաւ Յունիս 30ին,
երեկոյին, Մանուկ անուն մի տղայ բան-
տարկեցին։ Պատճառը շատ կատակերգա-
կան է։ Մանուկ անունով երիտասարդ մի
կայ եղեր Խարբերդցի որ այժմ Աղէք-
սանդրիա կը կենայ, անոր մասին ասեր
են իբր թէ հայեր Ամերիկա կը ճամբէ ե-
դեր, այդ պատճառաւ այս տեղիս 17 տա-
րեկան Մանուկը կը բռնեն ըսելով թէ
դուն ես այն Մանուկը։ Երբ կ'ապացու-
ցուի թէ սխալեր են, կը սկսին պնդել թէ
ուրեմն այս Մանուկ կը ճանչնայ զայն Մա-
նուկ։ Երաշխաւոր տալով ելաւ բանտէն։

Ճ. ՍԱՆԻՄ

ՆԱՄԱԿ ՖԻԼԻՓՕՐՆԻՈՅԷ

Ֆրէզնօ, Յուլիս 6, 1895

Ամերիկայի ազատութեան տարեդարձի՝ Յուլիսի չորրորդ օրն՝ խիստ փառաւոր ու պատուաբեր օր մի եղաւ Հայոց համար։

Քաղաքիս կարգադիր մասնախմբին կողմանէ յատուկ հրաւիրագիր եկաւ Հայկական ընկերութեանս, նոյն օրուան թափորին մասնակցելու խնդրանօք, ուստի ընկերութիւնս մասնախումբ մի ընտրեց հարկ եղած պատրաստութիւններն ի գործ դնելու։

Ընկերութիւնս ներկայացուց «Մայր Հայաստանի» նկարն կենդանի պատկերով. աւերակներ, փլատակներ, մեծակառոյց շէնքերու բեկորներ, զէնք, զրահ, սուր, սաղաւարտ, թագ ու գաւազան, հին մադաղթեայ Աւետարան ցիրուցան այդ աւերակաց մէջ. քարերէն ոմանց վերայ գրուած էին Սասուն և ուրիշ քաղաքաց անուններ, Արարատ լեռն Նոյեան տապանովն ու կեդրոնն գեղանի հայ օրիորդ մի «Մայր Հայաստանի» սրտառուչ դիրքովն կը ներկայացուցէր Լաստին (FLOAT)ներքին մասն, որոյ չորս անկիւններն խիստ փառաւոր սիւներ կանգնուած և վերջին սիւներու երկու կողմն երկու զինուորներ հին Հայկական տարազով արձանացած էին նիզակ ի ձեռին։ Սիւներուն վրայ կամարաձև տախտակներ դրուած էին որոց առջեւի կողմին վրայ գրուած էր «ARMENIA» ոսկեզօծ մեծատառ գրերով, ետեւի կողմին վրայ գրուած էր «ARMENIA IN HER RUINS» (Հայաստան իւր աւերակաց մէջ). յառաջակողմեան կամարին գագաթը կը բարձրանար Հայկական Զինանշանն, խիստ փառաւոր շինուած, դորա կողերէն ինչպէս նաև սիւներու գագաթներուն վրայ կը ծածանէին Ամերիկեան դրօշներ. ծածկոյթն և չորս կողմերն զարդարուած էին Ամերիկեան դրօշի կտաւներով ու պարոկական շալերով։

Լաստին առջեւէն կ'երթար Ամերիկեան դրօշակակիր մի և սորա ետեւէն քրդակսն տարազով մէկը, ապա երկու Ռուսահայեր իրենց տարազովն որոց մէջ տեղէն կ'ընթանար փոքր օրիորդ մի՝ Անժէլ Եանըգեան, Թրապիզոնցի հայ կնոջ զգեստով, ամենքն ալ ձիաւոր։ Լաստին անմիջապէս ետեւէն կ'երթար ընկերութեանս դրօշն յոյժ գեղեցիկ ու ճաշակաւոր մի գործ. դորա ետեւէն կը քալէին կարգաւ ընկերութեանս անդամոց մէկ մասն իւրեանց կուրծքին վրայ կրելով ընկերութեան նշաններն. դոցա կարգին մէջտեղէն կընթանային այլեւայլ նշանաբաններ կրող անձինքներ և ուրիշ մի որ շինուած ահագին գիրք մի կը կրէր, մէկ կողքին վրայ Ֆ. Հ. Գ. Մ. տառերն և միւս կողքին վրայ գրուած էր FRESNO ARMENIAN LIBRARY, ORG. 1892.

Թափորի ամբողջ շարքին մէջ շատ տեղեր ծափահարուեցաւ և սքանչացման բացագանչութիւններու առարկայ եղաւ։ Կիները կատարելապէս ապշած ու հիացած էին այս երեւոյթին առջեւ։

Սան Ֆրանսիսքոյի Էկզէմինիրը մեծ տառերով սա վերնագիրը կը գրէ «Ֆրէզնոյի Նոր Օրինակ Լաստը։ Հայք ուշադրութիւն կը հրաւիրեն իւրեանց եղբարց տառապանաց վրայ։» ու կ'ըսէ «Ամենագեղեցիկ Լաստը Հայոցն էր» ու կը նկարագրէր անոր գլխաւոր մասերն։

Ֆրէզնոյի երեկոյեան «Expositor» թերթը կը գրէ. «Յոյժ սքանչելի, մի և նոյն ատեն սրտառուչ Լաստ մի կը ներկայանար Հայոց կողմանէ, ներկայացնելով Հայաստանն իր աւերակաց մէջ։ անիկա մեծապէս յաջողած էր և բոլոր բազմութեան մէջ մեծ յուզում յառաջ բերաւ.» ապա

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՏՄԱՆԻՔ
Տարեկան բաժնեգին է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

կը նկարագրէ Լաստն, ու կը վերջացնէ սա բառերով. «Հայերն սոով կը յայտնէին իրենց զգացումներն իրենց եղբարց նկատմամբ որոնք կը տառապին թրքաց ձեռքին տակ։ Իրենց զգացմանց արտայայտութիւնն է հետեւեալ արձանագրութիւնները, Ե՞րբ պիտի տօնէ Հայաստանը իւր Յուլիսի 4ը,» «Բռնակալութիւնն կռեց իմ շղթայն, աղատութիւնն զայն պիտի խորտակէ։»

Ֆրէզնոյի առաւօտեան թերթին մէջ կը կարդամք «Արդարութիւն է ըսել թէ այդ հանդիսին մէջ ոչ ոք այնչափ ուշադրութեան և դիտողութեան առարկայ եղաւ որչափ Հայոց Լաստը։ Անիկա ոչ միայն հայրենասիրական, այլ և հայկական և արուեստական էր»· ու Լաստին նկարագրութիւնն անելէ յետոյ կ'աւելցունէ «Այդ Լաստը աշխարհի չափ հին բան մի կը ներկայացուներէր, բառին բովանդակ նշանակութեամբն, այդ օրինակ ցոյց հաւանականաբար տեսնուած չէր երբէք Ամերիկայի ոեսէ քաղաքի մի մէջ. ժամանակ, խորհուրդ և պատմութիւն միասին կը ներկայանայ այդ գործին մէջ։»

Տիար Հայկի և Տ. Պատիկեանի ճարտար ձեռքերու արդիւնքն էին բոլոր նկարներն ու գրուածքներն, հրապարակաւ կը յայտնեմք իրենց մեր շնորհակալութիւնն ու ոքանչացումն, ինչպէս նաև Օր. Սուզի Մարգարեանի որ հաճեցաւ «Մայր Հայաստանի» դիրքին մէջ ներկայանալ ու յաջող կերպով կատարել այդ փափուկ և դըժուարին դերն. իր Հայկական գեղանի տիպն, խոշոր սև աչքերն, սև մազերն ուսերուն վրայ ծփուն, նուրբ, ճաշակաւոր և պարագային պատշաճ զգեստներն առաւել ևս կը յանկուցանէր առ ինքն ամբողջ ժողովուրդն. Ամերիկեան ազատութեան դիցուհին կարծես նստեցաւ «Մայր Հայաստանի»ին առջեւ։ Ց. Մ. ՆՇԻԿԵԱՆ

ՍԱՏԵԱԽՕՍԱԿԱՆ

ՆՈՐ ԲԱՌԱՐԱՆ

ԱՆԳԼԻԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ

Ի Փր. Վ. Ց. ՅԱԿՈԲԵԱՆԷ

Հրատարակիչ գրավաճառ Զ. ԹՈՐՈՍԵԱՆ
728Ներես. Կ. Պոլիս, 1802։

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ ԵՒ ՀՈՄԱՆԻՇՔ

Այս նոր բառարանն բաղդատաբար փոքրագիր է բայց իրօք մեծագոյն քան զվենետիկեանն։ Կարեւոր առաւելութեանց մին է անգլիերէն հնչման հայերէն գրերով աւելի ճիշդ ներկայացումն։ Ուրիշ գերազանցութիւն մ'ալ այն է որ անգլիերէն բառերուն հանդէպ դրուած են աւելի ճշդիւ համապատասխանող հայերէններ։

Այս երկու տեսակետով ունիմք ներկայացունել ինչ ինչ դիտողութիւններ։

1. Անգլիերէն p-ն հայերէն Բ և t-ն Դ հնչեր է հեղինակն։ Այդ սխալ է։ Ֆռանսերէնի մէջ այդ գրեր այդպէս կը հնչուին, իսկ յանգլիերէնի՝ նոցին ճիշդ հընչմունքն են Փ և Թ։ Թափանցիկ բառին ֆռանսերէնն Դռանսբառան կը հնչուի, անգլիերէնն Թրէնսփէրէնթ։

2. O գրին պէսպէս հնչումներն հայերէն նշանագրելումէջ վրիպած է ճշդամերձութենէ անդ ուր ուղիղ O ի դէմ դըրած է հայերէն Ը. զոր օրինակ, polite, բԸլայդ, որ շատ աւելի ճիշդ կը լինէր եթէ գրած լինէր փOլայթ, ֆOլիթիքէլ։

Ը գիրն որ մեր արդի հայերէնի ախտաբեր մանրէից մին է, և Ա, Ե, ՈՒ ձայնաւորաց տեղ կը յանգդնի այնքան յաճախ բազմիլ, Հայերն անգլիերէնի հնչման մէջ ևս կը մոլորցունէ։ Հայերէն վԸրա(վերայ), մԸ(մի), Ըսել (ասել), Ընել (անել), Ըղեղ (ուղեղ), ցԸցԸնել(ցուցանել) հնչելէ յետոյ զարմանալի չէ որ անգլիերէն ևս հնչել փորձուէինք բԸլայդ (փOլայթ) և այլն։

3. Անգլիերէն լեզուի ահագին դըժուարութեանց քան զամենայն ահաւորն է չեշտն։ Հեղինակն ուզած է մի քանի կանոններով դիւրել սակաւ մի զայդ դըժ-

ուարութիւն։ Սակայն կանոններն այնքան հեռու են ընդհանուր լինելէ որ ուսանողն մոլորցուներու կը ծառայեն յաւէտ։ Օրինակի համար, «բազմավանկ բառերն, կ'ասէ, այնպէս կը շեշտուին, ինչպէս իրենց արմատը· incon'tinently, վանդի արմատն է con'tinent։» Վտանգաւո՛ր կանոն, որում եթէ վստահի, ուսանողն բազում բառեր սխալ պիտի շեշտէ։ Շատ բազմաթիւ են օրինակք ուր շեշտն այս ինչ վանկին վերայ է, բայց երբ նոր վանկ կամ վանկեր աւելնան, այն ինչ վանկին կ'անցնի։ Զոր օրինակ· Off'ice, offic'ial· Ar'chitec ture, architect'ural· Or'gan, organ'ic· յորս շեշտն առաջին վանկէն կ'անցնի երկրորդին կամ երրորդին։ Independ'ent բառին շեշտն երրորդ վանկին վերայ է, իսկ Indep'endenceի երկրորդ վանկն կը կրէ շեշտը։

Այդպիսի կանոններէ առաջնորդուելով է որ Հայեր ամերիկայի մէջ երկար տարիներ մնալէ յետոյ իսկ սխալ շեշտեր կը պահեն և իրենց անգլիերէն արտասանութիւնն դժուարհասկանալի է բնիկներուն։ Կայ հայ, ուսեա՛լ Հայ, որ 10—15 տարի անգլիերէն խօսելէ յետոյ ալ կ'ասէ օր'կէնիք, փոխանակ օրկէն'իք հնչելու, այն պատճառաւ որ կարծած է թէ «այնպէս կը շեշտուի բազմավանկն, ինչպէս արմատն։»

Գալով հայերէն բառերուն, չեմ կրնար տեսնել թէ այս բառարան ունի ո և է առաւելութիւն վերջերս հրատարակուած ֆրանսերէնէ հայերէն բառգրոց վերայ։ Մի քանի օրինակով ցուցնեմք զայդ։

Legal· օրինաւոր, օրինական։

Legitimate· օրինաւոր, օրինական։

Նոյն անգունութիւնն է որ կար միւս նոր բառգրոց մէջ։ Բայց արդի հայերէնի մէջ ճշդուած են այդ բառից տարբեր առմունք, և տարբերութիւնքն ծանօթ են ամենից (բաց ի բառգրոց արդոյ հեղինակներէն)։ Legal օրինական է, և legitimate օրինաւոր։

War· կռիւ, մարտ։

Battle· կռիւ, մարտ, պատերազմ։

Fight· կռիւ, մարտ։

Միշտ կռիւ և մարտ։

Ուշադիր գրագիտաց գաղտնիք չէ պատերազմ, մարտ և կռիւ բառերուն տարբերութիւնն· պատերազմն է war, guerre, այսինքն թշնամական գործողութեանց ամբողջն, բոլոր տևողութեամբն, ընդ մէջ երկու բանակաց։ Մարտն է battle, bataille, այսինքն պատերազմին մասնաւոր ընդհարմանց մին։ Կռիւն է fight, զէնքով, բռնցի կամ խօսքով։

Migration· չու, տեղափոխութիւն։

Նուպարեան կը դնէ— պանդխտութիւն, տեղափոխութիւն, չու։

Բիւզանդացին— չուելն, վարատական երթալն, չու։

Ոչ փոքր զարմանք է որ երեքեանն ալ զանց կ'անեն բուն հայերէն համապատասխանն որ է «գաղթումն»։

Բացարձակ սխալներ ալ սպրդած են Բառարանին մէջ։ Eye-ball «աչքի բիբ»չէ, այլ աչքի պտուղն, գնդակն։ Over-bid «աւելի գին ուզել» չի նշանակեր այլ, ընդհակառակն, աւելի գին ընծայել։ Eye-brow յօնք է, ոչ թէ «արտևանունք։» Undermeal, «յետ ճաշու» չէ։ Հարկաւ այսպիսի սխալմունք հազուադէպ լինելու են։

Հեղինակն կարեւոր յայտարարութիւն մ'է արած յառաջաբանին։ «Անգլիերէն լեզուն, կ'ասէ, լինելով եւրոպական լեզուաց հարստագոյնը, հարիւրաւոր անգլիերէն բառերու դիմաց լաւագոյն հայ, գաղ-գերմ· բառարանները կը տկարանային ստէպ, չըսենք յուսահատ համրութիւն մը կը պահէին, սակայն բարենախանձ եռանդը մոռցուց այն ամեն դըժուարութիւններն։ Համակրական աջակցութիւնն զոր շնորհեցին ինձ Անթոլիա Գոլէճի Պատ· պաշտօնակիցքս և գոլէճի մեծ գրատունն պարգեցին իմ ճամբաս։ Գաւառաբարբառք օգնեցին ինուլ կարեւոր բաց մը· այնպէս որ հայ գրականութեան մէջ բոլորովին նոր հարիւրաւոր բուսաբանական, հանքային, կենդանաբանական և երկրագործական բառեր և բազմաթիւ ասութիւններ՝ կապուած անգլիական ասութեանց և յատկաբանութեանց հետ՝ մուտ գտան այս բառգրքիս մէջ։»

Այս ծանուցումէն կ'երեւի թէ հեղինակն առաջին անգամ լինելով ի բառարան հաներ է ի գաւառաբարբառոց հարիւրաւոր բառեր բուսաբանական և այլն, այսինքն կարեւոր հանգանակութիւն մի մեր լեզուին գիտական բացատրութեանց։ Հանգանակութիւնն գնահատելի է, մանաւանդ որ իւր գիտուն պաշտօնակցաց օգնութեամբ ճշդած պէտք է լինի այդ պա-

սառաբառից համապատասխանութիւնն եւրոպականաց։ Շատ ցաւալի է, սակայն, որ հեղինակն զանց արած է ոեւէ նշանիւ ցոյց տալ թէ ո՛յք են այդ նոր բառեր։ Իւր խօսքերէն այնպէս կը թուի թէ նոր բառեր ևս կերտեր է «բարենախանձ եռանդով», բայց ոչ մի կերպիւ չէ նշանագրած զայնս, որպէս զի հայագէտք քննէին և որդեգրէին զլաւն, մերժէին զյոռին։ Այդ շատ ցաւալի է։ Ֆռանսերէնէ-Հայ աշխարհիկ բառգրոց մէջէն առած գործածած է հեղինակն բայց առանց ինչ և իցէ նշան դնելու նոր հայերէն բառեր զոր Նուպարեան ստեղծեր էր։ Զոր օրինակ, Microb, կենսիկ· Convulsion, դնդերահարութիւն։ Այդ և այդպիսի յոռի բառեր ստեղծելով մեր լեզուին վնաս գործեց Նուպարեան, և ով որ անխորհրդաբար որդեգրէ զայնս, մեղսակից կը լինի նմա։ Միգրոպն մանրադիտական էակ է, յանհունս փոքրունց կարգէն, և ուստի կրնայ կոչուիլ մանրէ, ինչպէս արդէն կայ մանրաճճի, մանրախիճ ևն։ Ունիմք է, յոքնակին էք, էից։ Ուրեմն մանրէ, մանրէք, մանրէից ասել՝ պիտի լինէր մաքուր և հարազատ հայերէն։ Բայց ելնել ստեղծել կենսիկ բառ մի, որ պիտի նշանակէր փոքր կեանք, բոլորովին անհեթեթ է, զի փոքր կամ մեծ կեանքի վերայ խնդիր չկայ, և ոչ ալ երկար կամ կարճ կեանքի։ Կեանք վերացեալ բառ մ'է, վիճակ մի կը նշանակէ, ոչ թէ էակ մի կամ ապրող անհատ մի։ «Դնդերահարութիւն» բոլորովին սխալ է։

Ասոնք օրինակ միայն են· Այդպիսի հրէշակերպ արարածներ շատ եկան վերջերս ի հայ աշխարհ։ Պէտք է այդ լեզուական ճիւաղաց հետ վարուիլ ամենայն խստութեամբ։ Ուրախ պիտի լինէինք եթէ մեր ուսումնական հանդէսներն, «Բազմավէպ» և «Հանդէս Ամսօրեայ» մասնաւորապէս, այս խնդրոյ լուրջ ուշադրութիւն նուիրէին և յաճախ ցոյց տային նորաստեղծ բառերու այլանդակութիւնները։

Թող ներուի մեզ պնդել թէ նոր բառ չինելու արուեստն կարծուածին չափ դիւրին չէ, և պարտին գրողք յախուռն ծընունդ չտալ նորաբանութեանց։ Նոր ճըշմարիտ բառ ստեղծելու համար հարկաւոր է ոչ միայն հայերէնի ամենախորին հըմտութիւն այլ և բազմաճոյի ուսմանց գրեթէ անսահման տեղեկութիւն, և այդու ամենայնիւ հանդերձ՝ մասնաւոր տաղանդ մ'ալ թերևս։ Կ'ընդունիմք թէ առանց պայմաններն իրագործած լինելու ալ կրնայ ուսումնական ոք պատահաբար յաջող բառ մի չինել, որպէս չինած են Նուպարեան և այլք, բայց որպէս գի որոմի բազմութիւնն ցորենին հետ չխառնուի, պէտք է որ նոր բառերու յերիւրիչք որոշ նշանաւ ցոյց տան զայնս։

Զգոյշ լինիմք, չիցէ՞ թէ մեր սքանչելի ազգայեն լեզուն այլանդակեմք ու վատթարեմք յանդուգն, անկանոն, անճոռնի նորաբանութեամբք։

Լեզուն ազգային տեսկականութեանց քան զամենայն նուիրականն է· պարտ է խորին պատկառանօք վարուիլ անոր հետ։

ԸՅԼ ԵՒ ԸՅԼՔ

Տ· ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊ· ԱԼԵԱԹՃԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՑ

Սգաւոր Ազգն մխիթարեալ սրտիւ կը ողջունէ զընտրութիւն Տ· Գրիգորիս սրբազանի ի կաթողիկոսութիւն Կիլիկիոյ կարեւոր թեմին։ Կորովի, ուսեալ, պարկեշտ և աշխատասէր անձնաւորութիւն մ'է Նա, մին ի հազուագիւտ արժանաւորաց մեր եկեղեցական դասուն։

Խրիմեան Հովուապետ ամենայն Հայոց, Իզմիրլեան Պատրիարք Թրքահայոց, Ալեաթճեան Կաթողիկոս Կիլիկիոյ-- աւանիկ եռաստղ բոյլ մի յուսափայլ և բարենչան վասն Հայութեան։

Միայն Թուրք կառավարութիւնն ուրախ չէ Տ· Գրիգորիսի կաթողիկոսութեան վերայ, և կը հնարի բեկանել զայն։ Թ· Հագիգաթէն կ'առնու «Հայրենիք» հետեւեալ լուրն, «Սիսի կաթողիկոսութեան թեմականները հանրագիր մի մատուցանելով Դատական և Կրօնական Գործոց Նախարարութեան, յայտարարած են թէ Գրիգորիս Սրբազանի ընտրութիւնն Սիսի կաթողիկոսութեան, ընդունուած սովորութեանց և տիրող կանոններուն հակառակ է, հետևաբար այդ ընտրութիւն չի կրնար ընդունուիլ։»

Հայր Տէրունեանի միջոցաւ հանդանակութիւն կը լինի Ամերիկայի Հայոց մէջ ի նպաստ Սասնոյ սովելոց։

Թայմզին կը հեռագրեն Յունիս 29-ի Պոլսէն.

Ի յաւելուած անուանմանն Շաքիր փաշայի իբրեւ տեսուչ Ասիոյ ինչ ինչ գաւառաց, նոր Մասնաժողով մ'ալ կարգուած է Սուլթանէն, պաշտօն ունենալով հայաբնակ գաւառաց բարեկարգութեան համար ծրագիր մի պատրաստել։ Անդամքն են Թիւրխան, Խալիլ, Բիֆաթ, Բիգա, Զիւհատի և Թէւֆիք փաշաներն։ Այս բոլոր միջոցք կը ցուցնեն թէ Սուլթանն որոշած է Հայկական Խնդիրն տէրութեանց գործողութենէն անկախ կերպով մի—այն ուրիշ բան է, եթէ ձեռք առնուած են անոնք լոկ ժամանակ շահելու և լուծումն չփոթելու վախճանաւ։... Տեսուչ տիտղոսն Յանձնակատարի տեղ գրուած է՝ թուի՝ այն մտօք որ Տէրութեանց պահանջներուն զիջումն արած լինելու երևոյթ չունենայ։ Նոր ոչ տեսուչն և ոչ Մասնաժողովն ունին ի հուպ գալ դեսպանատանց հետ և սոքա բոլորովին կ'անգիտանան նոցա կարգումն։

Կ. Պոլիս, Յուլիս 5. առ Տէյլի Նիւզ— Նկատելով սովէ և թշուառութենէ տառապելոց մեծ թիւն Հայաստանի մէջ, Պատրիարքարանն վերջերս հրահանգ արուաւ որ եկեղեցեաց մէջ հրաւէր կարդացուի ի նպաստ սովելոց հանգանակութիւններ կատարելու, Դրաքննութիւնն թոյլ չտալով որ այդպիսի հրաւէրներ լրագրաց միջոցաւ լինին։ Այժմ Դուռն հրաման յղած է Պատրիարքարանին դադրեցուցնել այս հանգանակութիւններն որոց պէտք չկայ, իբր թէ, կառավարութիւնն ինքնին միջոցներ ձեռք առած լինելով ի վախճարութիւն նեղելոց։

Եօթն Հայեր, որք Բաղէշէն հասած են ի Կ. Պոլիս, ձերբակալուեցան որպէսզի, կ'ենթադրուի, չկարենան երկրին վիճակին վերաբերութեամբ լուրեր տարածել։

Իբր Հարիւր Հայ ալ ձերբակալուած են արգիլեալ լրագիրներ կարդալու և օրուան խնդրոյն վերայ խօսակցելու ամբաստանութեամբ։

Նուվէլ տ'Օռիանի կը գրեն Կ. Պոլսէն թէ զնախկին Պատրիարք Աշըգեան և զԱզարեան ևս սպաննել որոշած են եղերյեղափոխականք, բայց որոշումն լու լինելով Պատրիարք Իզմիրլեան Հօր, սպառնացեր է իսկ և իսկ հրաժարիլ պատրիարքութենէ եթէ ի գործ դնեն այդ խօլ որոշումներն։ Այս ազգի անսալով՝ ձեռնթափ եղած են ...ենանք։ Աշըգեան երկչոտ ոք էր, անարժան պատրիարք, բայց շատ սրխալ է կարծել զնա արժանի մահու պատժոյ։ Այդ գառիթափ շատ սահուն է։ Պէտք զգուշանալ ծայրայեղութենէ։

Պուլկարիոյ նախկին նախարարապետ Սթամպուլօֆի սպանումն ամենադարչելի արարք մ'է։ Սթամպուլօֆ անկեղծ, անձնուէր գործիչ մ'էր, մեծ հայրենասէր, որ ստեղծեց զՊուլկարիա։ Եթէ ոճրագործք գործեցին այդ վիթխարի եղեռն իբրև Պուլկար հայրենասէրներ, պէտք է անգամ մ'ալ սոսկալ մարդկային ապերախտութեան և ապշութեան վերայ։

Մակեդոնիոյ ապստամբական շարժումն կը զօրանայ։ Յուլիս 19ին Սօֆիայէն կը հեռագրեն թէ ծանր կռիւ մի տեղի ունեցած է ապստամբաց և թուրք գրնդոց միջև. օսմանցիք յաղթուած են 600 հոգւոյ կորստով։

Վառնայի Հայ բնակիչք ի միթինկ գումարուելով, Յունիս 30, 1895, իրենց Ս. եկեղեցւոյ շրջափակին մէջ, ընդ նախագահութեամբ Սրժ. Տէր Յովհան Մանդակունի Հօր, ի նկատի առին վարչական բարենորոգմանց Ծրագիրն և քուէարկեցին հետևեալ որոշումն.— Դիմել Կ. Պոլսոյ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, և խոնարհաբար աղաչել իրեն որ յանուն Թուրքիոյ Հայոց բողոք բառնայ առ որ անկ է զեղեպանական ծրագրին այն մասերուն դէմ որ բնաւ Հայոց օրինաւոր պահանջները և պէտքերը լրացնելու բնութիւնն չունին. և խնդրէ եւրոպական տէրութիւններէն որ հաճին Թրքահայոց անտանելի կացութեան վերջ մը տալու համար գէթ եւրոպական վարչութիւն մը հաստատել Հայաստանի մէջ, եթէ երբէք քաղաքական հանգամանաց բերմամբ անկարելի նկատեն երկիրը օժտել հայկական վարչութեամբ մը։

Միթինկի նախագահին յանձնուած է սոյն որոշման գործադրութիւնը։

Նախագահ Միթինկին

ՅՈՎՀԱՆ ՔՀ. ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Ի՞նչ ժպիրհ կատակ է զոր Սուլթանն կ'ուղղէ առ Եւրոպա՝ Հայկական բարենորոգմանց կայսերական տեսուչ ան-

ունելով զՇաքիր փաշա, զա՛յն Շաքիր որ Համիտիյէ դնդոց ձեռօք զՀայս սպառելու ծրագիրն յղացած և ի գործ դնելու զհետ էր։

Թուրքն անթիւ բարեկամ կորոյս իւր վերջին գաղանութենէն ի վեր, և եթէ Սալզպէրիի դահլիճն թոյլ շարժի Թուրքիոյ դէմ, պատճառն ոչ թէ թրքասիրութիւնն պիտի լինի այլ անգլիական թիւր իմաց շահախնդրութիւնն։

Իրաւամբ կասէ ազնուախոհն «Սփէքթէյթօր» «Ցամենայն դէպս, կը յուսամք թէ Լորտ Սալզպէրի ոչ միայն հաստատամտութիւն պիտի ցուցնէ այլ և առաջնորդութիւն (Հայոց Խնդրում)։ Ինչ ալ որ պատահի, պէտք է չլքանել զՀայս։ Անգլիոյ անջնջելի անպատուութիւն պիտի գայ եթէ, իւր կողմանէ թուլութեան պատճառաւ, Փոքր Ասիոյ քրիստոնեայ ժողովուրդք նորէն մատնուին Թրքի անասելի անգթութեանց։»

Սասունցի Տիկին Ալթուն, Տ. Պետրոսի կինն, Մայիս 7ի մեծ անգլիական միթինկին մէջ չխօսեցաւ, այլ ոտքի ելաւ Լէյտի Սօմէրսէթի ատենախօսութեան մէկ պահուն և իւր համեստ երևութով և տխրամած դիմօք ազդեց ներկայ բազմութեան իրրև մունջ իմն պերճախօսութեամբ։ Սակայն յայնմ հետէ ճառախօսել ալ սկսեր է Տիկինն անգլիական ժողովոց մէջ։ Անգամ մի, Սասնոյ մանկանց ջարդին նկատմամբ մի քանի պարզ բայց ազդու խօսքերէ յետոյ գրկեց համբուրեց նա իւր մօտ կանգնած փոքրիկն, և սկսաւ սաստիկ արտասուել, տեսարան որ խորապէս յուզեց հանդիսականները։

Անգլիական հանգանակութիւնն ի նպաստ Հայոց։— Լոնտոնում կազմուած է այդ նպատակաւ Մասնախումբ մի, նախագահութեամբ Տիւք ավ Արկայլի և դերնախագ. Տիւք ավ Ոէսթմինիսթրի։ Հանգանակութեան ցանկն կը հրատարակուի հետզհետէ Տէյլի Նիւզի մէջ։ Նախագահն արդէն 1000 անգղ. ոսկի հեռագրական հրամանաւ յղած է։ Յուլիս 10, գումարն հասած էր 1650 ոսկւոյ։ Տ. Կլատսթոն և Լորտ Ռոզպէրի 50ական ոսկի նուիրեր են։

Թուրք կառավարութիւնն վրիպած լինելով հաստատելու յետաձգեցն այն պարտուց զոր պարտէր վճարել Քրուփի՝ ի հաշիւ թնդանօթոցն զորս հայթայթեց նա Տարտանէլի ամրութեանց համար, թնդանօթագործն մերժած է աւելի մատուցում անել ըստ նախկին համաձայնութեան, և խնդրած է (գերման) կառավարութենէն որ բռնադատէ գԴուռն վճարել պարտքն։

ՄՇԱԿ կարի շահեկան յօդուածներ կը թարգմանէ ռուս լրագիրներէն վերաբերութեամբ ներկայ տագնապին։ Նով. Վրէմա թերթն հետևեալ նշանակիչ տողերով կը վերջացունէ իւր մի յօդուած որ թարգմանուած է Մշակում։— «Մեզի թւում է, կ'ասէ ռուս թերթն, որ անգլ. քաղաքագէտները շատ խախուտ ենթադրութիւն են անում հաւատացնելով որ Ռուսաստան և Ֆռանսա եթէ չեն մասնակցիր Մեծն Բրիտանիայի յարձակողական գործողութիւնների (ընդդէմ Թուրքիոյ) եւրոպական արեւելքում, գոնէ արգելքներ չեն յարուցանի։ ... Անգլիացիների նպատակն է նոր նուաճումներ անել իսկ այդ դէպքում նրանք կը հանդիպին Ռուսաստանի և Ֆռանսայի կտրական դիմադրութեան։»

ՄՇԱԿ նոյն ռուս լրագրէն կը թարգմանէ Կ. Պոլսէն յղուած լուրն թէ Իտալական դեսպանն յանկարծ մեկնեցաւ դէպ ի Հռովմ, տանելով հետն շատ հայկական գանձատներ որք կարնոյ իտ. հիւպատոսէն հաղորդուած էին։ Իտալիա կ'աշխատի Անգլիոյ սիրան շահիլ՝ զՏրիպոլիս շահելու համար, և ուրեմն անգլաիտալական ճնշումն կը սպառնայ Թուրքիոյ։

Կայսերական Դիտարանն հասած հեռագիր մը որ կը ծանուցանէ թէ Մալաթիոյ մէջ երկրաշարժի զօրաւոր ցնցում մը տեղի ունեցեր է։ «ՀԱՅՐԵՆԻՔ»

Յուլիս 2ին Տր. Պիթինկի եկեղեցւոյն մէջ միժողով եղաւ, յորում Հայոց խընդրոյն վերայ Ամերիկացւոց խօսեցան Հայքի Խմբագիրն, Տր. Այվազեան և փաստաբան Տիար Քոնսթէնթ։ Որոշմունք քուէարկուելով յղուեցան Ուօշինկթոն և Լոնտոն։

Տ. Պ. Մ. կը գրէ մեզ Ռէյսինէն։— թէպէտ տեղս վեց Հայ միայն կանք, բայց աշխատեցանք միթինկ մ'ալ հոս ընել Հայկ. Խնդրոյն համար և յաջողեցանք։ Կը յուսանք թէ անօգուտ չեղաւ Ամերիկացիներուն մեր արդար դատը ճանչցնելու։

Լինէն կը գրէ մեզ Տ. Լ. —

Նկրտականաց Պոսթոնի մեծ ժողովոյն մէջ Նախագահն յայտարարեց թէ «Միակ երկիրն ուր Միութիւնս ճիշդ չունի, է ապիկար Սուլթանի երկիրն, որոյ ձեռաց տակ մեր հաւատակից եղբարք, Հայք, կը տառապին։ Լիայոյս եմ թէ շուտով միացեալ քրիստոնէութիւնն պիտի քանդէ պատուարն որ կայ Հայաստանի և մեր միջև։ (ծափք)։

Իշխան Պորիս Արկութինսքի Տօլկորուքօֆ մի տարեկան «Հայք» կը նուիրէ Թեհրանի Հայոց Սրամեան վարժարանին, և Տիար Մ. Գալփագճեան (Բարիզ) մի ՀԱՅՐ Խոյի Հայոց վարժարանին։ Ի ձեռն Տիար Յ. Իսկէնտէրի ստացեր է խմբագրութիւնս 50 տոլար՝ Բարիզի ազգայնոց հանգանակութիւնն ի նպաստ «Հայքի», և 10 տոլար Պէրմանիայէ Տիար Պաղտասարէ։

Թրոյէն կը գրէ Տ. Դերձակեան. — Տեղւոյս ազգայիններէն ի նպաստ «Հայքի» հրատարակութեան հանգանակէցին 2 տոլար 55 սէնթ, զոր կը յղեմ ձեզ ներփակեալ։

Տիար Տ. Շուշան հաճած է յանձն առնուլ «Հայքի» գործակալութիւնն Յուստ։ Բաժանորդք կրնան նմա վճարել գինն։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Կը խնդրուի ՀԱՅՐԻ Բումանիոյ և Պուլկարիոյ պատուարժան բաժանորդներէն կամ բաժանորդ գրուիլ փափաքողներեն, որ հաճին փութացնել իրենց բաժանորդագներն Տիար Գառնիկ Տէօքմէճեանի, մեր գործակալին ի Ռուսճուք։

Կը խնդրեմք որ մինի օրտրրի կամ մանտատը փոսթի միջոցաւ խմբագրութեան նոյս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

5 և 7 E. 10դ Փողոց

5դ Էվիւնիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անուանն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ԴԱՌՆԻԿ ՏԷՕՔՄԷՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Ամեն տեսակ գրեանց և տպագրական արտադրութեանց, զանազան պատկերներու և ն. ն.։

ԳՈՐԾԱԿԱԼ

«Արաքս», «Հայք», «Հանդէս Ամսօրեայ», «Բազմավէպ», և այլ առօրեայ և պարբերական հրատարակութեանց։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հրատարակչական Ընկ. Հայոց Թիֆլիզի և այլ մի քանի ծանօթ գրատանց և տպարանաց։

ՀԱՅԹԱՅԹԻՉ

Եւրոպական լեզուաւ ամեն տեսակ գրեանց և հրատարակութեանց։

Հաստատեալ 1890 ի Ռուսճուք

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Կը հրատարակուի տարին 300 թիւ։ Օտար երկրաց համար տարեկան բաժանորդագինն է 25 ֆրանք կամ 5 տոլար։ «ՀԱՅՐԵՆԻՔ» Թրքահայոց լուսագոյն լրագիրն է։ Հասցէն է —

Le Journal HAIRENIK,
Galata, Constantinople, Turquie

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ.ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարեւ է, քալէ, վազէ, շրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, չարքով, ծնրադրութեամբ, գետնամած և ն. ն.։ Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սէնթ։

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ·Ս· ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ԱՐՈՒԵՍՏ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ։ Քսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան։— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈԼՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ՁՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէտքն ՁԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք։

Գինն է 2ուկէս ֆրանք կամ 1 ռուպլի (50 սէնթ։) Ութածալ 120 երես։ 1891

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՐԱՆՆԱՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային իտէականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես։ 1894

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ԶԷՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ Է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ՁԱ'ՐԿ, ՆԵՐԲԻՆ ՎՏԱՆԳՔ, ՑԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆԲԻ ՈՒԺՈՎ։ Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես։ 1893

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական խնդիրն այլ ևս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է։ Հետևապէս հարցն այն չէ թէ կարո՞ղ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իբրեւ ազգ։ Ձերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկնաւորն, բռունք յափշտակեն։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացուցեմք։ Ոչ թէ բան մ'ասելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես։ 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, *Սպառած։*

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերն պատմաբանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որդեգրեն որ կարենայ իբրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն։

Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 61 երես։ 1888

«*Հայքի*» նախորդ տարիներն կը վաճառուին հետևեալ դներով·

Ա· տարի, 1 տոլար 50 սէնթ կամ 7·5 ֆր·
Բ· ,, 2 ,, կամ 10 ֆրանք։
Գ· ,, 2 ,, ,, ,, ,,
Դ· ,, 2 ,, ,, ,, ,,

Ոմանք տոլար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կա՛մ Ըէֆիսթը անել նամակն կամ մընի օրտը յղել առ ի ապահովութիւն։

M. S. T. NAHIGIAN,

IMPORTER AND EXPORTER.

Also

Banker and Steamship Agent.

P. O. BOX, 478-

Worcester, Mass., U. S. A., July 15, 1895

Սիրելի Հայրենակիցք,

Մեր գործին 14րդ տարին յաջողութեամբ թեւակոխած եմք։ Մեր անցեալ տարիներու գործունէութիւնն և հանրածանօթ հաւատարմութիւնն, որով միայն յարգելի յաճախորդաց գոհունակութեանն և քաջալերութեանն իրաւամբ արժանացած եմք։ Ապագայում ևս առաւել դիւրութիւններ ի ձեռին, չարունակելի լինիլն խոստանալու պէտք չկայ։

Ուստի շնորհակալութիւնս յայտնելով մեր յարգելի յաճախորդաց վասն անցեալին, կը յուսամք և կ'ակնկալեմք որ մեր հայրենակիցներ առ հասարակ, մեր անցեալը դրաւական առած պիտի բարեհաճին մեր հետ գործ ընել վստահ լինելով թէ ամենադիւրին և ամենաապահով և ամենակարճ միջոցներ ունիմք գիրենք գոհացունելու, և յաճախորդաց կարեւոր դիւրութիւններ ընծայելու համար, հեռագրով կամ փոխ-գրով դրամ ուղղակի փոխադրելու կարգադրութիւն արած եմք պատուաւոր վաճառականներու հետ հետեւեալ քաղաքաց մէջ—

Կ. ՊՈԼԻՍ		ԽԱՐԲԵՐԴ	
ԶՄԻՒՌՆԻԱ	ՊԷՐՈՒԹ	ԻՍԿԷՆՏԷՐՈՒՆ	ՀԱԼԷՊ
ԱՑՆԹԱՊ	ՄԷՐՏԻՆ	ՏԻԱՐՊԷՔԻՐ	ՄԱԼԱԹԻԱ
ԱՐԱԲԿԵՐ	ԱԿՆ	ԿԻԻՐԻՆ	ԿԱՐԻՆ
ՎԱՆ	ԵՐԶՆԿԱՅ	ԲԱՂԷՇ	ՄՈՒՍՈՒԼ
ԷՍԿԻ ՇԷՀԻՐ	ԿԵՍԱՐԻԱ	ՍԵԲԱՍՏԻԱ	ԿԵՐԱՍՕՆ
ՍԱՄՍՕՆ	ԵՕԶԿԱԹ	ԷՆԿԻԻՐԻԻ	ՊԱՂՏԱՏ

Վերոյիշեալ քաղաքներէ զատ Թուրքիոյ մէջ ուրիշ տեղեր ալ ուղղակի դրամ փոխադրելու մասին ևս թղթակցութեան մէջ եմք։ Մարսիլիոյ մէջ հայ պատուաւոր վաճառական մի կը նայի մեր գործոց որպէս գիտէք։ Նաև Եւրոպիոյ գլխաւոր քաղաքներ ևս դրամի փոդադրութեան դիւրութիւն ունիմք ապահով պանդայի մի հետ մասնաւոր կարգադրութեամբ։

Նաւատոմսի գործակալութիւնն կը չարունակեմք, և ամեն նաւային ընկերութեանց նաւերով աշխարհիս ո և է կողմն գացողի համար գոհացուցիչ գներով տոմսակ կրնամք վաճառել։

Ունինք Վենեռիկի Անգղ·—Հայ և Հայ—Անգղ· բառարանք և Կ·Պոլսոյ երեք լեզուեան բառարանք և ուրիշ գրեանք նոր եկած։

Նամակաց անմիջապէս պատասխանել մեր սովորութիւնն է։

Ձերդ հաւատարմութեամբ,

Մ·Ս·Թ·ՆԱՀԻԳԵԱՆ



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Սպահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և չատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Ասոր ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ ԱՄԷՐԻՔԷՆ ԷՔՍՓՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s Money Order)

Կատարելապէս ապահով են։ Այդ ընկերութեան ոևէ իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետևեալ պայմաններով վճարելի յԵրոպա.

Ոչ	աւելի	քան	5	տոլար	5 սենթ
,,	,,	,,	10	,,	8
,,	,,	,,	20	,,	10
,,	,,	,,	30	,,	12
,,	,,	,,	40	,,	15
,,	,,	,,	50	,,	18
,,	,,	,,	100	,,	30

MORRISON & Co.

ԴԵՐԶԱԿ

106 Fulton St., New York

Ամառուան համար ընտիր ձեռք մի զգեստ, ձեր վերայ յատկապէս ձեւուած չափուած կը շինեմք 16 տոլարի, իսկ սառնազգեստ (փանթոլոն) 4 տոլարի։ Ձեւին կատարելութիւնն ու ճշդութիւնն կերաշխաւորենք։

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. **$3** a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, **25** cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address

MUNN & CO., NEW YORK, **361** BROADWAY.

BUSH & Co.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ